ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. հուլիսի 9-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. **ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավման ուղղությունների վերաբերյալ հաղորդում (դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Գ. Ղազինյան):**

Պրոֆեսոր Գ. Ղազինյանը նշեց, որ բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման և անընդհատ բարելավման գործընթացները միշտ էլ կարևորվել են ՀՀ կրթական համակարգում, սակայն ներկայումս ստեղծված իրավիճակի պայմաններում դրանց պատշաճ իրագործումը դարձել է ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ հրատապ:

Դեռևս 2005թ. միանալով Բոլոնիայի հռչակագրին՝ Հայաստանը ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց իրականացման հիմնական նպատակը բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովումն է: Այդ գործընթացի շրջանակներում հսկայական աշխատանք է կատարվել երկրում. ընդունվել են օրենսդրական մի շարք ակտեր, ստեղծվել են տարբեր կառույցներ, կենտրոններ (մասնավորապես, կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը և այլն), ձևավորվել են մի շարք գործընթացներ (լիցենզավորման, հավատարմագրման և այլն), սակայն, արդյունքը ակնհայտ անհամապատասխան է ձեռնարկված միջոցներին, ինչի մասին վկայում է օրեցօր աճող այն դժգոհությունը, որն առկա է թե՛ կրթական ծառայություններ մատուցողների, թե՛ այդ ծառայություններից օգտվողների և կրթության ոլորտի այլ շահառուների (գործատուների և այլն) շրջանում: Սա պետք է ուղղակի ազդանշան լինի նախևառաջ պետության համար՝ ձեռնարկելու անհապաղ միջոցներ բարձրագույն կրթության որակի բարելավման ուղղությամբ, իսկ որպես օրինակ, կարող է առաջարկվել բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավման մեր կողմից մշակվող հայեցակարգը, որը կներառի ինչպես որակի բարելավման հիմնական ուղղությունները, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը, իրականացման ձևերն ու միջոցները, մեթոդոլոգիան և ակնկալվող արդյունքները:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավման հիմնական ուղղությունները քննարկվելուց, մոտեցումները ընդհանրացվելուց, միասնականացվելուց և լրացվելուց հետո նախատեսվում է՝ ***մշակել և ընդունել «Իրավագիտության ֆակուլտետում բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավման հայեցակարգ» և հաստատել անհետաձգելի միջոցառումների իրականացման ժամանակացույց:*** Այդ միջոցառումների բնույթից, բովանդակությունից, իրականացման եղանակներից կախված՝ նախատեսվում է

հնարավորության դեպքում դրանց իրականացմանը աջակից դարձնել կրթության ոլորտի շահառուներին, այդ թվում՝ պետական կառավարման լիազոր մարմնին, ԵՊՀ-ին, ուսանողությանը, գործատուներին, իրավաբանների միությանը (որպես մասնագիտական միություն, ինչպես ընդունված է ողջ աշխարհում), ինչպես նաև համագործակցել տարբեր ծրագրեր ֆինանսավորող կազմակերպությունների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Դիլբանդյանը, Հ. Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հավանություն տալ իրավագիտության ֆակուլտետում բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավման հիմնական ուղղությունների նախագծին և դրա հիման վրա սեղմ ժամկետներում ձեռնամուխ լինել ***«Իրավագիտության ֆակուլտետում բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավման հայեցակարգի»*** մշակմանը :

2. **Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ս. Դիլբանդյան):**

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. **Իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների վերաբերյալ (զեկ.՝ տնօրեն Ա. Հարությունյան):**

Ա. Հարությունյանը ներկայացրեց կլինիկայի գործունեության դրական արդյունքները, միաժամանակ նշելով այն խնդիրները, որոնք այսօր առկա են և հրատապ լուծում են պահանջում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Իսկոյանը, Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Հ. Ղուկասյանը, Ս. Մեղրյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Իրավաբանական կլինիկայի հետագա գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կլինիկայի տնօրենի և համապատասխան մասնագետների հետ քննարկել կլինիկայի աշխատանքների հետագա կազմակերպման հարցը և ներկայացնել խորհրդի առաջիկա նիստի քննարկմանը:

4. **Ուսանողական խորհրդի նախագահի տարեկան հաղորդումը կատարված աշխատանքների մասին (զեկ. ուսխորհրդի նախագահ՝ Ա. Կրպեյան):**

Հաղորդումը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կատարված աշխատանքների մասին ուսանողական խորհրդի նախագահի տարեկան հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. **2011-12 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների հաստատման մասին (զեկ.՝ Ա. Պետրոսյան, ամբիոնների վարիչներ):**

Զեկուցողները նշեցին, որ իրավագիտության ֆակուլտետում 2011-12 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները կազմված են, պատրաստ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոսների 2011-2012 ուս. տարվա անհատական ծանրաբեռնվածությունը:

6. **2010-11 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի և 1-ին լուծարքային շրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):**

Հ. Խաչիկյանը ներկայացրեց 2010-2011 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Ըստ հաշվետվության՝ կուրսերի առաջադիմության ցուցանիշները հետևյալն են.

Առաջին կուրսում /136 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 25 տոկոս: 16 ուսանող ունեցել է 3 և ավելի պարտք : Հեռացվել է 7 ուսանող : 12 ուսանող ստացել է գերազանց գնահատականներ, 13 ուսանող գերազանց և լավ գնահատականներ: 1-ին լուծարքից հետո առաջադիմությունը կազմել է 55 տոկոս:

Երկրորդ կուրսում / 146 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 41տոկոս: 16 ուսանող ունեցել է 3 և ավելի պարտք, հեռացվել է 3 ուսանող : 4 ուսանող ստացել է գերազանց գնահատականներ, 27 ուսանող՝ գերազանց և լավ գնահատականներ: 1-ին լուծարքից հետո առաջադիմությունը կազմել է 68 տոկոս:

Երրորդ կուրսի /143 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 37 տոկոս: 33 ուսանող ունեցել է 3 և ավելի պարտք, հեռացվել է 5 ուսանող : 17 ուսանող ստացել է գերազանց գնահատականներ, 17 ուսանող՝ գերազանց և լավ գնահատականներ: 1-ին լուծարքից հետո առաջադիմությունը կազմել է 59 տոկոս:

Չորրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 37 տոկոս : 43 ուսանող ունեցել են 3 և ավելի պարտք :

Մագիստրատուրայում 1-ին լուծարքին պարտք են ունեցել 2 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-11 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն :

7.1. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ Վահե Հովհաննիսյանի «Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի պատմական զարգացման հիմնախնդիրները Հայաստանում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

7.2. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ իրավագիտության ֆակուլտետի 1-ին տարվա մագիստրանտ Գոհար Գևորգյանի «Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկություններ» վերտառությամբ գիտական հոդվածը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

7.3. **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի ՕՀԳ ամբիոնի ավագ դասախոս Տիգրան Ներսիսյանին ամբիոնում հայցորդ ձևակերպելու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը, միջնորդել ԵՊՀ ռեկտորատին՝ Տիգրան Ներսիսյանին ձևակերպել հայցորդ քրեական իրավունքի ամբիոնում:

7.4. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Արսեն Սարոյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Արսեն Սարոյանը հաշվետու տարում հանձնել է թեկնածուական մինիմումի քննություն՝ «Օտար լեզու» և ստուգարք՝ «Ինֆորմատիկա» առարկաներից, ձեռք է բերել ատենախոսության թեմայի վերաբերյալ գրականություն և այլ նյութեր, կազմել է աշխատանքի պլանը և ձեռնամուխ եղել աշխատանքի շարադրմանը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*